«ՏեխԴրաֆտ» ՍՊԸ-ի վերաքննիչ բողոքի բավարարման հիմքով ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «Տեխ Դրաֆտ» ՍՊԸ-ի պետք է բռնագանձել վերաքննիչ բողոքի ներկայացման համար վճարված 75.000 դրամ պետական տուրքի գումարը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 380-րդ և 387-րդ հոդվածներով՝ Վերաքննիչ դատարանը

ՈՐՈՇԵՑ

1. «Տեխ Դրաֆտ» ՍՊԸ-ի անունից ներկայացված վերաքննիչ բողոքը բավարարել.թիվ ԵԴ2/11194/02/24/ քաղաքացիական գործով ՀՀ, Երևան քաղաքի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի 24.02.2025թվականի վճիռը բեկանել և փոփոխել հետևյալ կերպ.

«1.«Տեխ Դրաֆտ» ՍՊԸ հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ «Տեխ Դրաֆտ» ՍՊԸ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու վերաբերյալ 22.11.2024 թվականի որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, բավարարել. անվավեր ճանաչել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի 22.11.2024թվականի որոշումը:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «Տեխ Դրաֆտ» ՍՊԸ-ի բռնագանձել հայցադիմումի ներկայացման համար վճարված 50.000 դրամ պետական տուրքի գումարը»:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեից հօգուտ «Տեխ Դրաֆտ» ՍՊԸ-ի բռնագանձել 75.000 դրամ՝ որպես վերջինիս կողմից վերաքննիչ բողոքի ներկայացման համար նախապես վճարված պետական տուրքի գումար:

3. Սույն որոշումը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի հարկադիր եղանակով ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին:

4. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և 15-օրյա ժամկետում կարող է բողոքարկվել ՀՀ վճռաբեկ դատարան:

Նախագահող դատավոր՝ **Կարեն Համբարձումյան**

Դատավորներ՝ **Հարություն Ենոքյան**

Լիլիթ Սարգսյան

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am